



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՂՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 08(348) «14» մայիսի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
114	«Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-4-Ն օրենքը.....	4
115	«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-5-Ն օրենքը.....	5
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
116	«2018 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-47-Ն հրամանագիրը.....	
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
117	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 313-Ն որոշումը.....	7
118	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 314-Ն որոշումը.....	8
119	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 315-Ն որոշումը.....	9
120	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ	

	կառավարության N 316-Ն որոշումը.....	10
121	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 317-Ն որոշումը.....	11
122	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 318-Ն որոշումը.....	
123	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 322-Ն որոշումը.....	12
124	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 10-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 323-Ն որոշումը.....	17
125	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 166 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 324-Ն որոշումը.....	19
126	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի N 95 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 325-Ն որոշումը.....	34
127	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 326-Ն որոշումը.....	51
128	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի N 521-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 337-Ն որոշումը..	54
129	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 259-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 260-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 338-Ն որոշումը.....	56
130	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 23-ի N 53 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 339-Ն որոշումը.....	58

131	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի N 72-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 340-Ն որոշումը..	60
132	««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու, «Կովսական» պետական արգելոց, «Սոսիների պուրակ» պետական արգելավայր և «Կաչաղակաբերդ» ազգային պարկ ստեղծելու, «Կովսական» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» պետական արգելավայրի և «Կաչաղակաբերդ» ազգային պարկի կանոնադրություններն ու սահմանների հատակագծերը և կոորդինատները հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1996 թվականի նոյեմբերի 19-ի N 237 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 346-Ն որոշումը.....	
133	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 347-Ն որոշումը.....	63
134	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 712 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 348-Ն որոշումը..	65
135	«Արցախի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 349-Ն որոշումը.....	67
136	«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 350-Ն որոշումը.....	72
137	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 351-Ն որոշումը.....	92

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
ապրիլի 19-ին

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-111-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում՝

«Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության պետական նախարարի խորհրդականները և օգնականները,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. մայիսի 3
Ստեփանակերտ
ՀՕ-4-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
ապրիլի 19-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-70-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 1 հավելվածում՝

«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի օգնական 4.40» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմ	
--	--

Արցախի Հանրապետության պետական նախարարի խորհրդական	5.23
---	------

Արցախի Հանրապետության պետական նախարարի օգնական	4.40»:
--	--------

Հոդված 2. Օրենքի N 2 հավելվածում՝

«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական» տողից հետո հանել հետևյալ տողերը.

«Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմ	
--	--

Արցախի Հանրապետության պետական նախարարի խորհրդական	5.23
---	------

Արցախի Հանրապետության պետական նախարարի օգնական	4.40»:
--	--------

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. մայիսի 3
Ստեփանակերտ
ՀՕ-5-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018թ.

N 313-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,13 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018թ.

N 314-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,713 հեկտար բազմամյա տնկարկը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018թ.

N 315-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 379 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խաչմաչի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,2 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018թ.

N 316-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1994 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018թ.

N 317-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 168 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,068 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2018թ.

N 322-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 9-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասին, 22-րդ հոդվածի 4-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 9-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 1-ին կետի 1-ին, 3-րդ ենթակետերում, որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետում, որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 5-րդ կետում, որոշմամբ հաստատված N 9 հավելվածի 2-րդ կետում, որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կենսաթոշակ նշանակող իրավասու մարմիններն են՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, Արցախի Հանրապետության ոստիկանությունը, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը.».

3) որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության արդարադատության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, Արցախի Հանրապետության ոստիկանությունը, Արցախի Հանրապետության» բառերով.

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1. Սույն որոշման դրույթները չեն տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո՝ «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է սույն որոշմամբ սահմանված կարգով:».

5) որոշմամբ հաստատված՝

ա. N 1 հավելվածի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն), Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը,

Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, Արցախի Հանրապետության ոստիկանությունը, Արցախի Հանրապետության» բառերով,

բ. N 1 հավելվածի 3-րդ, 30-32-րդ, 35-րդ, 35.3-րդ, 37-րդ կետերում, 39-րդ կետի 2-րդ ենթակետում, 42.1-ին կետի 3-րդ ենթակետում, 44-47-րդ, 50-50.1-ին, 50.3-50.4-րդ, 80-րդ, 85-րդ, 91-րդ կետերում, N 2 հավելվածի 2-րդ, 22.1-ին, 29-30-րդ, 33-րդ, 45-րդ կետերում, N 3 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում, 4-րդ կետի 5-րդ ենթակետում, N 8 հավելվածի 7-րդ, 10-րդ, 22-րդ, 25-րդ կետերում, N 9 հավելվածի 4-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ կետերում, N 10 հավելվածի 3-4.1-ին, 27-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով,

գ. N 1 հավելվածի 35.4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի, տնօրենի տեղակալների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի, պետի տեղակալների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի, տնօրենի տեղակալի ու շտաբի պետի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի, տնօրենի տեղակալների, Արցախի Հանրապետության ոստիկանության պետի, պետի տեղակալների, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի, տնօրենի տեղակալի ու շտաբի պետի, Արցախի Հանրապետության» բառերով,

դ. N 2 հավելվածի 27.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցելու ժամանակահատվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցելու ժամանակահատվածը՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Արցախի Հանրապետության ոստիկանության կամ Արցախի Հանրապետության» բառերով,

ե. N 3 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության ոստիկանության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Արցախի Հանրապետության» բառերով,

զ. N 3 հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետում, N 8 հավելվածի 1-ին կետում, N 10 հավելվածի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

է. N 8 հավելվածի 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Արցախի Հանրապետության ոստիկանության կամ Արցախի Հանրապետության» բառերով,

ը. N 9 հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունից կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից, Արցախի Հանրապետության ոստիկանությունից կամ Արցախի Հանրապետության» բառերով,

թ. N 10 հավելվածի 9-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության» բառերը

փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2018թ.

N 323-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածի 6-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջարկում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի «Զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա պարգևավճարի չափերը՝ ըստ պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» N 10-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Սույն որոշման դրույթները չեն տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն որոշման մեջ նշված անձինք ձեռք են բերում «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ամենամսյա պարգևավճարի իրավունք:».

2) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր

ազգային անվտանգության ծառայության տնօրենին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին, Արցախի Հանրապետության ոստիկանության պետին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին, Արցախի Հանրապետության» բառերով:

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում, 3-րդ, 5-րդ կետերում, որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 1.1-ին, 3-րդ, 5.1-ին, 7-րդ, 10.1-11-րդ կետերում, որոշմամբ սահմանված N 3 հավելվածի «օրենսդրության» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

4) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում, որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով:

5) որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության ոստիկանության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Արցախի Հանրապետության» բառերով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2018թ.

N 324-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 27-Ի N 166 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի «Արցախի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Արցախի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 166 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «Արցախի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները» բառերը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները» բառերով.

2) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության» բառերը փոխարինել «պետական քոլեջի» բառերով, բացառությամբ 7-րդ կետի.

3) 6-րդ կետի «Միջին մասնագիտական պետական հաստատություններին» բառերը փոխարինել «Պետական քոլեջներին» բառերով.

4) 7-րդ կետում «Արցախի Հանրապետության» բառերը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերով.

5) որոշմամբ հաստատված՝

ա. N 1 հավելվածի ցանկի 1-ին տողի «երաժշտական» և 2-րդ տողի «քոլեջ» բառերից առաջ լրացնել «պետական» բառը,

բ. N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Օ Ր Ի Ն Ա Վ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«_____» ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «_____» պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ քոլեջ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է:

2. Քոլեջի հիմնադիրը Արցախի Հանրապետությունն է՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): Քոլեջն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ, ինչպես նաև հիմնարկ, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունենալ միայն հիմնադրի որոշմամբ:

3. Քոլեջի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «_____» պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «_____» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «_____» государственный колледж» Государственная Некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ «_____» ГНО.

5) անգլերեն լրիվ՝ «_____» state college» Noncommercial State Organization.

6) անգլերեն կրճատ՝ «_____» NSO:

4. Քոլեջի գտնվելու վայրը՝ _____:

5. Քոլեջը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Քոլեջն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Քոլեջն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

7. Քոլեջը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք: Քոլեջը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և անհատականացման այլ միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել ռուսերեն և (կամ) անգլերեն լեզուներ:

8. Քուլեջի կառավարման մարմիններն են՝
- 1) հիմնադիրը.
 - 2) Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին).
 - 3) քուլեջի կուլեգիալ կառավարման մարմինը՝ քուլեջի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).
 - 4) քուլեջի գործադիր մարմինը՝ քուլեջի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
9. Քուլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:
10. Քուլեջում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:
11. Քուլեջում գործավարությունն իրականացվում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
12. Քուլեջը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

II. ՔՈՒԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Քուլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Քուլեջը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր:

14. Քուլեջը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով՝

1) իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը.

2) կարող է իրականացնել մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր.

3) ապահովում է դասախոսների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.

4) աջակցում է քուլեջի ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև քուլեջի ուսանողների մասնակցությանը քուլեջի կառավարմանը և քուլեջի կողմից իրականացվող ծրագրերում.

5) միջոցներ է ձեռնարկում քուլեջի ուսանողների ինքնագարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար.

6) իրականացնում է միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր:

15. Քուլեջի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը.

2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը.

3) ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

4) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

5) սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը.

6) ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:

16. Քոլեջը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.

2) արտադրարտադրական դաստիարակության կազմակերպում.

3) նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

4) մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում.

5) կադրերի վերապատրաստում, վերադրակավորում և որակավորման բարձրացում.

6) ստեղծագործական, հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեության իրականացում.

7) ուսումնասարտադրական, արտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.

8) ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում.

9) կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի միջոցառումների կազմակերպում և (կամ) սպասարկում.

10) հրատարակչական գործունեություն.

11) քոլեջի ուսանողների և աշխատողների հանրային սննդի կազմակերպում.

12) քոլեջի ուսանողների և աշխատողների համար հանրակացարանային ծառայությունների կազմակերպում.

13) քոլեջի ուսանողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

14) մշակութային գործունեության իրականացում:

17. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար քոլեջն իրավունք ունի հիմնադրի որոշմամբ ստեղծել տնտեսական ընկերություններ կամ դառնալ նրանց մասնակից:

18. Քոլեջը կրթական ծրագրերն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման, պետական հավատարմագրման դեպքում: Քոլեջը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ նաև հասարակական հավատարմագրում:

19. Քոլեջի գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները) հիմնադրի սահմանած կարգով օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III. ՔՈՒԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴԻԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հիմնադիրն ունի քոլեջի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Հիմնադիրն օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում՝

1) սահմանում է քոլեջի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

2) սահմանում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով քոլեջի կողմից տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ նրանց մասնակից դառնալու կարգը.

3) վերակազմակերպում կամ լուծարում է քոլեջը.

4) իրականացնում է այլ լիազորություններ:

21. Լիազորված մարմինն իրականացնում է քոլեջի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը: Լիազորված մարմինը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակում՝

1) հաստատում է քոլեջի կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները, սահմանում է խորհրդի ձևավորման կարգը.

2) սահմանում է քոլեջի կառավարման համակարգը.

3) սահմանում է քոլեջին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

4) վերահսկողություն է իրականացնում քոլեջին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս քոլեջի գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

5) լսում է քոլեջի գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

6) կասեցնում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչում տնօրենի կամ խորհրդի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը.

7) քոլեջի լուծարման դեպքում նշանակում է լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

8) իրականացնում է այլ լիազորություններ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Խորհուրդը բաղկացած է _____ անդամից (նշել ոչ պակաս, քան 11 և ոչ ավելի, քան 20), որոնց անվանական կազմը սույն կանոնադրության 23-րդ կետով սահմանված կարգով առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հաստատում է լիազորված մարմինը: Խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

23. Խորհրդի անդամներից՝

1) _____ ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը) թեկնածությունը լիազորված մարմինն առաջադրում է տվյալ շրջանի վարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը).

2) _____ ին, այդ թվում՝ պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը), սոցիալական գործընկերներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը), տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը) որոշում է լիազորված մարմինը.

3) _____ ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 20 տոկոսը) թեկնածությունը քոլեջի մանկավարժական աշխատողների կազմից լիազորված մարմինն առաջադրում է քոլեջի մանկավարժական խորհուրդը.

4) _____ ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը) թեկնածությունը քոլեջի ուսանողների կազմից լիազորված մարմինն առաջադրում է քոլեջի ուսանողական խորհուրդը:

24. Խորհուրդն իր կազմից, քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Խորհրդի նախագահ չի կարող լինել խորհրդում քոլեջի ուսանողական խորհրդի

ներկայացուցիչը, քոլեջի հաստիքային աշխատողը (ամբիոնի վարիչ, առարկայական (ցիկլային) հանձնաժողովի նախագահ, դասախոս, այլ աշխատող):

25. Խորհրդի անդամ չի կարող լինել տնօրենը:

26. Խորհուրդը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իր աշխատակարգով նախատեսված կարգով՝

1) քննարկում և լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:

2) հաստատում է իր աշխատակարգը, ընտրում է խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, քարտուղար:

3) հաստատում է քոլեջի հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները:

4) սահմանում է տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգը, կազմակերպում, անցկացնում է մրցույթը և մրցույթում հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուին (թեկնածուներին) ներկայացնում է լիազորված մարմնին:

5) իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները:

6) սույն կանոնադրության 36-րդ կամ 41-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է լիազորված մարմին առաջարկություններ կայացնել տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

7) քոլեջի իրավասությանը վերապահված ներքին կառավարման հարցերի վերաբերյալ տնօրենին և խորհրդին խորհրդատվական առաջարկություններ (եզրակացություններ) ներկայացնելու նպատակով, տնօրենի առաջարկությամբ, քոլեջի փոխտնօրենների, ամբիոնի վարիչների, բաժանմունքների վարիչների, մանկավարժների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների կազմից կարող է ստեղծել քոլեջի տնօրինական խորհուրդ, սահմանել դրա իրավասությունը և գործունեության կարգը:

8) քոլեջի ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մանկավարժական կազմի աշխատողների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով տնօրենի առաջարկությամբ կարող է ստեղծել քոլեջի մանկավարժական, ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև ամբիոնների, մասնագիտական և առարկայական հանձնաժողովներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը:

9) հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը:

10) տնօրենի առաջարկությամբ կարող է սահմանել քոլեջի մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, կազմակերպել և անցկացնել մրցույթը:

11) հաստատում է քոլեջի տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները:

12) լիազորված մարմին է ներկայացնում քոլեջի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները:

13) սահմանում է քոլեջում մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ:

14) տնօրենի առաջարկությամբ սահմանում է ներքոլեջային կրթաթոշակներ և դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև ուսանողական նպաստներ, պետական և ներքոլեջային կրթաթոշակներ ստացող քոլեջի ուսանողների անվանական կազմերը:

15) հիմնադրի սահմանած կարգով որոշում է քոլեջի շահույթի տնօրինմանն ուղղությունները:

16) տնօրենի առաջարկությամբ քննարկում է քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը.

17) տնօրենի առաջարկությամբ քննարկում և առաջադրում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները.

18) քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում լիազորված մարմին.

19) հաստատում է քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

20) հաստատում է տնօրենի և մանկավարժների պարզևատրման, կյոթական խրախուսման, ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգերը.

21) հաստատում է խորհրդի անդամների վերապատրաստման կարիքների գնահատմանը և նրանց գործուղմանն ուղղված միջոցառումները.

22) հաստատում է քոլեջի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

23) համաձայնություն է տալիս սեփականության իրավունքով քոլեջին պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքների կնքման համար, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ.

24) իրականացնում է այլ լիազորություններ, ինչպես նաև հաստատում է քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

27. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամների մեկ երրորդի կամ տնօրենի նախաձեռնությամբ: Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

28. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

29. Խորհրդի նիստերը, որպես կանոն, բաց են: Խորհրդի նիստերն անցկացվում են սույն կանոնադրությանը և խորհրդի աշխատակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, հասարակայնության, կազմակերպությունների ներկայացուցիչներ:

30. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են խորհրդի լիազորություններն ավարտվելու դեպքում կամ եթե նա

1) հրաժարական է տվել.

2) առաջադրված է եղել քոլեջի ուսանողական խորհրդի կողմից և կորցրել է քոլեջի ուսանողի կարգավիճակը.

3) առաջադրված է եղել քոլեջի մանկավարժական կազմի խորհրդի կողմից և կորցրել է քոլեջում իր աշխատանքը.

4) դատապարտվել է ազատազրկման.

5) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.

6) առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին.

7) մահացել է:

31. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում իր լիազորությանը վերապահված հարցերի վերաբերյալ:

32. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ՝ խորհրդի այդ անդամի թեկնածությունն առաջադրած մարմնի առաջարկությամբ:

33. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան թափուր տեղ առաջանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

34. Խորհրդի որոշումները կարող են օրենքով սահմանված կարգով բողոքարկվել՝ լիազորված մարմնին կամ դատարան:

V. ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Տնօրենի թեկնածուն (թեկնածուները) ընտրվում է (ընտրվում են) խորհրդի սահմանած մրցութային ընթացակարգով: Լիազորված մարմինը մրցույթի արդյունքում խորհրդի կողմից հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուի կամ թեկնածուներից մեկի հետ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է պայմանագիր:

36. Տնօրենի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

2) ում օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

37. Տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է քոլեջի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս քոլեջի անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում է գործարքներ.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով տնօրինում է քոլեջի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) սահմանում է քոլեջի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում քոլեջի հիմնարկների, ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ղեկավարներին և քոլեջի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) տալիս է քոլեջի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով լիազորագրեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

8) համաձայն տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշի՝ հաստատում է քոլեջում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանը, առկայության դեպքում՝ մոդուլային ուսումնական պլանը, առարկայական և (կամ) մոդուլային ծրագրերը և դրանցում կատարում փոփոխություններ:

9) հաստատում է այն մասնագիտության կամ մասնագիտական որակավորման գծով ուսումնական պլանը և առարկայական ծրագիրը, որի պետական կրթական չափորոշիչը հաստատված չէ:

10) ուսումնական պլաններով սահմանում է քոլեջի ուսանողների ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը:

11) խորհրդի հաստատմանն է ներկայացնում ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ ստացող քոլեջի ուսանողների անվանական կազմը:

12) կարող է խորհրդին առաջարկություն ներկայացնել ներքոլեջային կրթաթոշակներ նշանակելու մասին:

13) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քոլեջի մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար:

14) քոլեջի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրում տվյալ ոլորտում զբաղվածության վիճակի մասին, իսկ հնարավորության դեպքում՝ նաև օժանդակում նրանց աշխատանքի տեղավորմանը:

15) վերահսկողություն է իրականացնում քոլեջում ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ:

16) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը:

17) տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին:

18) իր լիազորությունների սահմաններում արձակում է քոլեջում և նրա ստորաբաժանումներում կատարման համար պարտադիր հրամաններ, հրահանգներ, տալիս է ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

19) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ քոլեջի իրավասությանը վերապահված այլ լիազորություններ, որոնք խորհրդին կամ քոլեջի այլ մարմնի վերապահված չեն:

39. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված մարմնի, խորհրդի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Տնօրենի բացակայության դեպքում լիազորված մարմնի հրամանի համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

41. Տնօրենը չի կարող՝

1) միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

2) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

3) քոլեջի հետ կապված հարաբերություններում լինել երրորդ անձանց ներկայացուցիչ:

4) ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Արցախի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

42. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են լիազորված մարմնի որոշմամբ, եթե՝

- 1) նա դիմում է այդ մասին.
- 2) լրացել է նրա 65 տարին.
- 3) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.
- 4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.
- 5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.
- 6) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն կանոնադրության 36-րդ կամ 41-րդ կետով նախատեսված հանգամանքները.
- 7) նա իր գործառնություններն իրականացնելիս քոլեջին կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է քոլեջին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 5 տոկոսը.
- 8) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.
- 9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.
- 10) նա կորցրել է Արցախի Հանրապետության քաղաքացիությունը.
- 11) դատական կարգով քոլեջը ճանաչվել է սնանկ, կամ քոլեջն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.
- 12) քոլեջի կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարներն իր մեղքով սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.
- 13) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:
43. Տնօրենի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:
44. Սույն կանոնադրության 42-րդ կետի՝
 - 1) 1-ին ենթակետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշված օրվանից.
 - 2) 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 13-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը.
 - 3) այլ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:
 45. Սույն կանոնադրության 43-րդ կետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:
 46. Տնօրենի հրամանները, հրահանգները, ցուցումները կարող են օրենքով սահմանված կարգով բողոքարկվել լիազորված մարմնին կամ դատարան:

VI. ՔՈՒԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

47. Քոլեջն ունի մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր: Քոլեջի մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

48. Քուլեջի մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է լիազորված մարմինը:

49. Քուլեջի աշխատողը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) մասնակցել քուլեջի կառավարմանը.

2) ընդգրկվել համապատասխան մասնագիտական, առարկայական խորհուրդների կազմում.

3) պետական կրթական ընդհանուր չափորոշչի շրջանակներում ընտրել և օգտագործել կրթական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ.

4) օգտվել քուլեջի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.

5) օգտվել այլ իրավունքներից:

50. Քուլեջի աշխատողը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահության կանոնները.

2) հետևել բարոյականության նորմերին, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից և արտահայտություններից, որոնք կարող են հանգեցնել հաստատության անձնակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի վատացմանը.

3) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.

4) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը, շարունակաբար կատարելագործել իր մասնագիտական և մանկավարժական հմտությունները, չկիրառել դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնք կհանգեցնեն ուսանողի անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնության:

VII. ՔՈՒԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

51. Քուլեջի ուսանողը միջին մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու համար տնօրենի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձն է, ում տրվում է սահմանված նմուշի ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

52. Քուլեջի ունկնդիրը տնօրենի հրամանով ընդունված անձն է՝ նախապատրաստական կամ կարճաժամկետ դասընթացներում, մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժանմունքում սովորելու համար: Ունկնդիրը կրթական ծառայություններ ստանալիս օգտվում է ուսանողի իրավունքներից:

53. Քուլեջի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, ներքին կարգապահության կանոններով:

54. Քուլեջի ուսանողը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է քուլեջը.

2) մասնակցել քուլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին.

3) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.

4) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերել գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ.

5) ստանալ երկրորդ մասնագիտություն կամ օգտվել լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից.

6) վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ.

7) առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ պահպանելով իր ուսանողական իրավունքը, ինչպես նաև վերականգնել ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած իր ուսանողական իրավունքը.

8) տեղափոխվել մեկ այլ, այդ թվում՝ նաև պետական հավատարմագրում ստացած, մասնագիտական ուսումնական հաստատություն.

9) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից.

10) մասնակցել քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը.

11) ստանալ ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման պետական նպաստ և կրթաթոշակ.

12) օգտվել սահմանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաև իրեն ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.

13) օգտվել այլ իրավունքներից:

55. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդի՝ առողջական վիճակի կամ զինծառայության) քոլեջից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

56. Քոլեջի ուսանողը և դիմորդն իրավունք ունեն ծանոթանալ սույն կանոնադրությանը, քոլեջի լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին:

57. Քոլեջի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Քոլեջի ուսանողական խորհուրդը համարվում է ստեղծված և օգտվում է սույն կանոնադրությամբ նախատեսված իրավունքներից՝ խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

58. Քոլեջի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահության կանոնները.

2) խնամքով վերաբերվել քոլեջի գույքին.

3) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

4) վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը.

5) կատարել կրթական ծրագրերի պահանջները.

6) հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին.

7) բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը.

8) պահպանել հասարակության բարոյական նորմերը:

59. Բարձր առաջադիմություն, փորձարարական-նախագծային աշխատանքներում գործուն և արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար խորհրդի կողմից կարող են սահմանվել խրախուսման նյութական ու այլ ձևեր:

60. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև սույն կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև քոլեջից հեռացվելը:

VIII. ՔՈՒԼԵՋԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

61. Քոլեջի սեփականությունը ձևավորվում է քոլեջի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև քոլեջի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

62. Հիմնադիրը կարող է քոլեջին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք կամ հետ վերցնել իր կողմից քոլեջին ամրացված գույքը: Քոլեջի ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

63. Քոլեջը սեփականության իրավունք ունի ամրացված գույքի օգտագործման արդյունքում քոլեջի ստացած եկամուտների, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից քոլեջին նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ: Սեփականության իրավունքով քոլեջին պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ քոլեջի լուծարումից հետո մնացած գույքի:

64. Հիմնադրի կողմից քոլեջին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ քոլեջի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

65. Քոլեջն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Քոլեջի սեփականության պահպանման հոգսը կրում է քոլեջը:

66. Քոլեջն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարվանից ավելի չի կարող սահմանվել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

67. Քոլեջի զբաղեցրած տարածքները (այդ թվում՝ դասասենյակ, լաբորատորիա, առարկայական կաբինետ, մարզադահլիճ, գրադարան-ընթերցասրահ, համակարգչային սենյակ, արհեստանոց, օժանդակ բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլ տարածքներ) ըստ կրթական ծրագրի՝ պետք է համապատասխանեն հիմնադրի սահմանած նորմատիվների պահանջներին:

68. Քոլեջն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

69. Քուլեջի սեփականության վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատական կարգով:

70. Հիմնադրի կողմից գույքը քուլեջին ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

IX. ՔՈՒԼԵՋԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

71. Քուլեջի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

72. Քուլեջն, ըստ հիմնադրի սահմանած չափի և հատկացումների, ֆինանսավորվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

73. Քուլեջի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից.

2) Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը.

3) Արցախի Հանրապետության համայնքների բյուջեները:

74. Քուլեջն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:

75. Քուլեջը կարող է վճարովի հիմունքներով սովորող ուսանողական համակազմի մինչև 10 տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին մասնակիորեն փոխհատուցել ուսման վճարը՝

1) միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին.

2) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

3) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

4) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին.

5) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին.

6) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ քուլեջի հայեցողությամբ.

7) քուլեջի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

76. Քուլեջը սահմանված կարգով ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին:

77. Քուլեջը հիմնադրի սահմանած կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

78. Քուլեջի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ հիմնադրի սահմանած կարգով:

X. ՔՈՒԼԵՋԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

79. Քոլեջը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Քոլեջը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: Քոլեջը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

80. Քոլեջի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

81. Քոլեջը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Քոլեջը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

82. Քոլեջը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

83. Քոլեջի լուծարման դեպքում քոլեջի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե, իսկ քոլեջի ուսանողների (ունկնդիրների) հետագա ուսուցման կարգը սահմանում է հիմնադիրը»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2018թ.

N 325-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 95 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի «Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու թիվ 3 արհեստագործական ավագ դպրոցը վերակազմավորման ձևով «Մարտունու արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, «Ստեփանակերտի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության արհեստագործական ավագ դպրոցը արհեստագործական ուսումնարան վերանվանելու և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական /արհեստագործական/ պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 95 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագրում «վերանվանելու և» բառերից հետո և տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) վերնագրում, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում «նախնական մասնագիտական /արհեստագործական/ պետական ուսումնական հաստատություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «արհեստագործական պետական ուսումնարան» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով.

3) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված արհեստագործական պետական ուսումնարանների կառավարման լիազորությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:»:

2. Որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«_____ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «_____ արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ուսումնարան) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն է:

2. Ուսումնարանի հիմնադիրը Արցախի Հանրապետությունն է՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): Ուսումնարանն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ, ինչպես նաև հիմնարկ, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունենալ միայն հիմնադրի որոշմամբ:

3. Ուսումնարանի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «_____ արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «_____» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «_____ государственное ремесленное училище» Государственная Некоммерческая Организация.

4) ռուսերեն կրճատ՝ «_____» ГНО.

5) անգլերեն լրիվ՝ «----- craftsman state school» Noncommercial State Organization.

6) անգլերեն կրճատ՝ «_____» NSO:

4. Ուսումնարանի գտնվելու վայրն է՝

_____:

5. Ուսումնարանը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Ուսումնարանն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Ուսումնարանն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

7. Ուսումնարանը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և անհատականացման այլ միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել ռուսերեն և (կամ) անգլերեն լեզուներ:

8. Ուսումնարանի կառավարման մարմիններն են՝

- 1) հիմնադիրը.
 - 2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ լիազորված մարմին).
 - 3) ուսումնարանի կոլեգիալ կառավարման մարմինը՝ ուսումնարանի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).
 - 4) ուսումնարանի գործադիր մարմինը՝ ուսումնարանի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
9. Ուսումնարանն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
10. Ուսումնարանում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:
11. Ուսումնարանում գործավարությունն իրականացվում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
12. Ուսումնարանը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

II. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Ուսումնարանի գործունեության հիմնական առարկան նախնական մասնագիտական (այսուհետ՝ արհեստագործական) հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումն է: Ուսումնարանը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև փորձնական մասնագիտական կրթական ծրագրեր:
14. Ուսումնարանը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով
- 1) իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը.
 - 2) կարող է իրականացնել մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր.
 - 3) ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.
 - 4) իրականացնում է արհեստագործական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր.
 - 5) աջակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությանն ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում.
 - 6) միջոցներ է ձեռնարկում ուսումնարանի ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար:
15. Ուսումնարանի գործունեության հիմնական նպատակներն են՝
- 1) ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջունքների բավարարումը.
 - 2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը.
 - 3) ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.
 - 4) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

- 5) սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը.
- 6) ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:
 16. Ուսումնարանը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
 - 1) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն.
 - 2) միջնակարգ կրթության երրորդ աստիճան (ավագ դպրոց).
 - 3) կրթություն մեծահասակների համար և ուրիշ կարգերում չներառված այլ կրթություն.
 - 4) հրատարակչական գործ.
 - 5) կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ.
 - 6) հանրակացարանների շահագործում.
 - 7) սպորտի բնագավառի այլ գործունեություն:
 17. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ուսումնարանն իրավունք ունի հիմնադրի որոշմամբ ստեղծել տնտեսական ընկերություններ կամ դառնալ նրանց մասնակից:
 18. Ուսումնարանը կրթական ծրագրերն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման և պետական հավատարմագրման դեպքում: Ուսումնարանը կարող է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ նաև հասարակական հավատարմագրում:
 19. Ուսումնարանի գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները) հիմնադրի սահմանած կարգով օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հիմնադիրն ունի ուսումնարանի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Հիմնադիրն օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում՝
 - 1) սահմանում է ուսումնարանի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
 - 2) սահմանում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով ուսումնարանի կողմից տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ նրանց մասնակից դառնալու կարգը.
 - 3) սահմանում է ուսումնարանում ուսուցանվող մասնագիտությունների ընդհանրական բնութագրերը և ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի և տևողության.
 - 4) սահմանում է ուսումնարանի և ուսումնարանում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերը, ինչպես նաև ուսումնարանի պետական հավատարմագրման կարգը, չափանիշները և տևողությունը.
 - 5) սահմանում է ուսումնարանին ֆինանսական միջոցների տրամադրման կարգը՝ ներառյալ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսանողական նպաստ և ուսումնական վարկ հատկացնելու կարգերը.
 - 6) սահմանում է ուսումնարանում մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռավար (դիստանցիոն), դրսեկության (էքստենսատի) և ներառական ձևերով ուսուցման կարգերը.

7) սահմանում է ուսումնարանի կողմից տրվող պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

8) վերակազմակերպում կամ լուծարում է ուսումնարանը.

9) իրականացնում է այլ լիազորություններ:

21. Լիազորված մարմինն իրականացնում է ուսումնարանի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը: Լիազորված մարմինը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակում՝

1) հաստատում է ուսումնարանի կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները.

2) սահմանում է ուսումնարանի կառավարման համակարգը.

3) սահմանում է խորհրդի ձևավորման կարգը, հաստատում է խորհրդի անվանական կազմը, ինչպես նաև վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի կամ նրա անդամի լիազորությունները.

4) խորհրդի ընտրած տնօրենի թեկնածուի (թեկնածուներից մեկի) հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) իրականացնում է արհեստագործական կրթական ծրագրերի լիցենզավորումը, ինչպես նաև ուսումնարանի պետական հավատարմագրումը.

6) սահմանում է ուսումնարանում իրականացվող մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը.

7) սահմանում է պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների.

8) սահմանում է ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների) ընդունելության կարգը.

9) սահմանում է ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների)՝ այլ ուսումնական հաստատություն տեղափոխման, ինչպես նաև ուսումնարանում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու կարգերը.

10) սահմանում է ուսումնարանի ուսանողներին (ունկնդիրներին) ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը և ժամկետները.

11) սահմանում է ուսումնարանում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքները վերականգնելու կարգը.

12) սահմանում է ուսումնարանում փորձնական կրթական ծրագրերի իրականացման կարգը.

13) սահմանում է ուսումնարանի սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը.

14) սահմանում է ուսումնարանի մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը.

15) սահմանում է ուսումնարանին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.

16) հաստատում է ուսումնարանի տարեկան ծախսերի նախահաշիվը սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում, համաձայնություն է տալիս ուսումնարանի գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

17) վերահսկողություն է իրականացնում ուսումնարանին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության, ուսումնարանում պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նրանց պատրաստման որակի, ինչպես նաև ուսումնարանում ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ.

18) լսում է ուսումնարանի գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

19) կատեցնում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչում տնօրենի կամ խորհրդի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը.

20) ուսումնարանի լուծարման դեպքում նշանակում է լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

21) իրականացնում է այլ լիազորություններ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Խորհուրդը բաղկացած է _____ անդամից (նշել ոչ պակաս, քան 11 և ոչ ավելի, քան 20), որոնց անվանական կազմը սույն կանոնադրության 23-րդ կետով սահմանված կարգով առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հաստատում է լիազորված մարմինը: Խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

23. Խորհրդի անդամներից՝

1) _____-ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը) թեկնածությունը լիազորված մարմինն առաջադրում է սովյալ շրջանի վարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը).

2) _____-ին, այդ թվում՝ պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը), սոցիալական գործընկերներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը), տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ _____ (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսը) որոշում է լիազորված մարմինը.

3) _____-ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 20 տոկոսը) թեկնածությունն ուսումնարանի մանկավարժական աշխատողների կազմից լիազորված մարմինն առաջադրում է ուսումնարանի մանկավարժական խորհուրդը.

4) _____-ի (նշել խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը) թեկնածությունն ուսումնարանի ուսանողների կազմից լիազորված մարմինն առաջադրում է ուսումնարանի ուսանողական խորհուրդը:

24. Խորհրդի անդամ չի կարող լինել տնօրենը:

25. Խորհուրդն իր կազմից, քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Խորհրդի նախագահ չի կարող լինել խորհրդում ուսումնարանի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, ուսումնարանի հաստիքային աշխատողը (ամբիոնի վարիչ, առարկայական (ցիկլային) հանձնաժողովի նախագահ, դասախոս, այլ աշխատող):

26. Խորհուրդը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իր աշխատակարգով նախատեսված կարգով՝

1) քննարկում և լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին առաջարկություններ.

2) հաստատում է իր աշխատակարգը, ընտրում է խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, քարտուղար.

3) հաստատում է ուսումնարանի հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

4) սահմանում է տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգը, կազմակերպում, անցկացնում է մրցույթը և մրցույթում հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուին (թեկնածուներին) ներկայացնում է լիազորված մարմնին.

5) իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները.

6) սույն կանոնադրության 36-րդ և 41-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է լիազորված մարմին առաջարկություն ներկայացնել տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ.

7) ուսումնարանի իրավասությանը վերապահված ներքին կառավարման հարցերի վերաբերյալ տնօրենին և խորհրդին խորհրդատվական առաջարկություններ (եզրակացություններ) ներկայացնելու նպատակով տնօրենի առաջարկությամբ ուսումնարանի փոխտնօրենների, ամբիոնի վարիչների, բաժանմունքների վարիչների, մանկավարժների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների կազմից կարող է ստեղծել ուսումնարանի տնօրինական խորհուրդ, սահմանել դրա իրավասությունը և գործունեության կարգը.

8) ուսումնարանի ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մանկավարժական կազմի աշխատողների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով տնօրենի առաջարկությամբ կարող է ստեղծել ուսումնարանի մանկավարժական, ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև ամբիոններ, մասնագիտական և առարկայական հանձնաժողովներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը.

9) հաստատում է ուսումնարանի ռազմավարական ծրագրերը.

10) տնօրենի առաջարկությամբ կարող է սահմանել ուսումնարանի մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, կազմակերպել և անցկացնել մրցույթը.

11) հաստատում է ուսումնարանի տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները.

12) լիազորված մարմին է ներկայացնում ուսումնարանի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները.

13) սահմանում է ուսումնարանում մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ.

14) տնօրենի առաջարկությամբ սահմանում է ներուսումնարանային կրթաթոշակներ և դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև ուսանողական նպաստներ, պետական և ներուսումնարանային կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմերը.

15) հիմնադրի սահմանած կարգով որոշում է ուսումնարանի շահույթի տնօրինմանն ուղղությունները.

16) տնօրենի առաջարկությամբ քննարկում է ուսումնարանի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը.

17) տնօրենի առաջարկությամբ քննարկում և առաջադրում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները.

18) ուսումնարանի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում լիազորված մարմին.

19) հաստատում է ուսումնարանի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

20) հաստատում է տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգերը.

21) հաստատում է խորհրդի անդամների վերապատրաստման կարիքների գնահատմանը և նրանց գործուղմանն ուղղված միջոցառումները.

22) հաստատում է ուսումնարանի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

23) համաձայնություն է տալիս սեփականության իրավունքով ուսումնարանին պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղա-

կիրեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքների կնքման համար, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

24) իրականացնում է այլ լիազորություններ, ինչպես նաև հաստատում է ուսումնարանի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

27. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամների մեկ երրորդի կամ տնօրենի նախաձեռնությամբ: Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

28. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

29. Խորհրդի նիստերը որպես կանոն բաց են: Խորհրդի նիստերն անցկացվում են սույն կանոնադրությանը և խորհրդի աշխատակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել ուսումնարանի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, հասարակայնության, կազմակերպությունների ներկայացուցիչներ:

30. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են խորհրդի լիազորություններն ավարտվելու դեպքում կամ եթե նա

1) հրաժարական է տվել.

2) առաջադրված է եղել ուսումնարանի ուսանողական խորհրդի կողմից և կորցրել է ուսումնարանի ուսանողի կարգավիճակը.

3) առաջադրված է եղել ուսումնարանի մանկավարժական կազմի խորհրդի կողմից և կորցրել է ուսումնարանում իր աշխատանքը.

4) դատապարտվել է ազատազրկման.

5) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.

6) առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին.

7) մահացել է:

31. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում իր լիազորությանը վերապահված հարցերի վերաբերյալ:

32. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ՝ խորհրդի այդ անդամի թեկնածությունն առաջադրած մարմնի առաջարկությամբ:

33. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան, թափուր տեղ առաջանալուց հետո տասնօրյա ժամկետում:

34. Խորհրդի որոշումները կարող են Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բողոքարկվել լիազորված մարմնին կամ դատարան:

V. ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Տնօրենի թեկնածուն (թեկնածուները) ընտրվում է (ընտրվում են) խորհրդի սահմանած մրցութային ընթացակարգով: Լիազորված մարմինը մրցույթի արդյունքում խորհրդի կողմից հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուի կամ թեկնածուներից մեկի հետ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է պայմանագիր:

36. Տնօրենի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

2) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել:

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

37. Տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է ուսումնարանի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս ուսումնարանի անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում գործարքներ:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով տնօրինում է ուսումնարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

3) սահմանում է ուսումնարանի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը:

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում ուսումնարանի հիմնարկների, ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ղեկավարներին և ուսումնարանի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

5) տալիս է ուսումնարանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով լիազորագրեր:

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:

7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

8) համաձայն տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի՝ հաստատում է ուսումնարանում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանը, առկայության դեպքում՝ մոդուլային ուսումնական պլանը, առարկայական և (կամ) մոդուլային ծրագրերը և դրանցում կատարում փոփոխությունները:

9) հաստատում է այն մասնագիտության կամ մասնագիտական որակավորման գծով ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը, որի պետական կրթական չափորոշիչը հաստատված չէ:

10) ուսումնական պլաններով սահմանում է ուսումնարանի ուսանողների ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը:

11) խորհրդի հաստատման է ներկայացնում ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ ստացող ուսումնարանի ուսանողների անվանական կազմը:

12) կարող է խորհրդին առաջարկություն ներկայացնել ներուսումնարանային կրթաթոշակներ նշանակելու մասին:

13) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ուսումնարանի մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

14) ուսումնարանի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրում տվյալ ոլորտում զբաղվածության վիճակի մասին, իսկ հնարավորության դեպքում՝ նաև օժանդակում նրանց աշխատանքի տեղավորմանը.

15) վերահսկողություն է իրականացնում ուսումնարանում ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ.

16) ապահովում ուսումնարանի ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը.

17) տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին.

18) իր լիազորությունների սահմաններում արձակում է ուսումնարանում և նրա ստորաբաժանումներում կատարման համար պարտադիր հրամաններ, հրահանգներ, տալիս է ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

19) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ ուսումնարանի իրավասությանը վերապահված այլ լիազորություններ, որոնք խորհրդին կամ ուսումնարանի այլ մարմնի վերապահված չեն:

39. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված մարմնի, խորհրդի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Տնօրենի բացակայության դեպքում լիազորված մարմնի հրամանի համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

41. Տնօրենը չի կարող՝

1) միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) ուսումնարանի հետ կապված հարաբերություններում լինել երրորդ անձանց ներկայացուցիչ.

4) ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ բացառությամբ Արցախի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

42. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են լիազորված մարմնի որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է դրա մասին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

6) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ կամ առաջ են եկել սույն կանոնադրության 36-րդ կամ 41-րդ կետով նախատեսված հանգամանքները.

7) նա իր գործառնություններն իրականացնելիս ուսումնարանին կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է ուսումնարանին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 5 տոկոսը.

8) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

10) նա կորցրել է Արցախի Հանրապետության քաղաքացիությունը.

11) դատական կարգով ուսումնարանը ճանաչվել է սնանկ կամ ուսումնարանն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

12) ուսումնարանի կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարներն իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

13) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

43. Տնօրենի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

44. Սույն կանոնադրության 42-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշված օրվանից.

2) 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 13-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը.

3) այլ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

45. Սույն կանոնադրության 43-րդ կետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:

46. Տնօրենի հրամանները, հրահանգները, ցուցումները կարող են Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բողոքարկվել լիազորված մարմին կամ դատարան:

VI. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

47. Ուսումնարանն ունի մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր: Ուսումնարանի մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

48. Ուսումնարանի մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է լիազորված մարմինը:

49. Ուսումնարանի աշխատողը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) մասնակցել ուսումնարանի կառավարմանը.

2) ընդգրկվել համապատասխան մասնագիտական, առարկայական խորհուրդների կազմում.

3) պետական կրթական ընդհանուր չափորոշչի շրջանակներում ընտրել և օգտագործել կրթական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ.

4) օգտվել ուսումնարանի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.

5) օգտվել այլ իրավունքներից:

50. Ուսումնարանի աշխատողը պարտավոր է՝

- 1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.
- 2) հետևել բարոյականության նորմերին, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից և արտահայտություններից, որոնք կարող են հանգեցնել հաստատության անձնակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի վատացմանը.
- 3) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.
- 4) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը, շարունակաբար կատարելագործել իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները.
- 5) չկիրառել դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնք կհանգեցնեն ուսանողի անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնության:

VII. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

51. Ուսումնարանի ուսանողը արհեստագործական կրթական ծրագրեր յուրացնելու համար տնօրենի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձն է:

52. Ուսումնարանի ունկնդիրը տնօրենի հրամանով ընդունված անձն է՝ նախապատրաստական կամ կարճաժամկետ դասընթացներում, մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժանմունքում սովորելու համար: Ունկնդիրը կրթական ծառայություններ ստանալիս օգտվում է ուսանողի իրավունքներից:

53. Ուսումնարանի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով:

54. Ուսումնարանի ուսանողը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է ուսումնարանը.

2) մասնակցել ուսումնարանի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին.

3) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով արհեստագործական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.

4) ստանալ կրթություն պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ձեռք բերել գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ.

5) ստանալ երկրորդ մասնագիտություն կամ օգտվել լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից.

6) վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ.

7) առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ պահպանելով իր ուսանողական իրավունքը, ինչպես նաև վերականգնել ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած իր ուսանողական իրավունքը.

8) տեղափոխվել մեկ այլ, այդ թվում՝ նաև պետական հավատարմագրում ստացած, մասնագիտական ուսումնական հաստատություն.

9) անվճար օգտվել ուսումնարանի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից.

10) մասնակցել ուսումնարանի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը.

11) ստանալ ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման պետական նպաստ և կրթաթոշակ.

12) օգտվել սահմանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաև իրեն ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.

13) օգտվել այլ իրավունքներից:

55. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդի՝ առողջական վիճակի կամ զինծառայության) ուսումնարանից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած՝ ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

56. Ուսումնարանի ուսանողները և դիմորդներն իրավունք ունեն ծանոթանալ սույն կանոնադրությանը, ուսումնարանի լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին:

57. Ուսումնարանի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունն ուսումնարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Ուսումնարանի ուսանողական խորհուրդը համարվում է ստեղծված և օգտվում է սույն կանոնադրությամբ նախատեսված իրավունքներից՝ խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

58. Ուսումնարանի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.

2) խնամքով վերաբերվել ուսումնարանի գույքին.

3) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

4) վճարովի հիմունքներով սովորելիս սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը.

5) կատարել կրթական ծրագրերի պահանջները.

6) հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին.

7) բարձր պահել ուսումնարանի ուսանողի պատիվն ու հեղինակությունը.

8) պահպանել հասարակության բարոյական նորմերը:

59. Բարձր առաջադիմություն, փորձնական-նախագծային աշխատանքներում գործուն և արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար խորհրդի կողմից կարող են սահմանվել խրախուսման նյութական ու այլ ձևեր:

60. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև սույն կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև ուսումնարանից հեռացվելը:

VIII. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

61. Ուսումնարանի սեփականությունը ձևավորվում է ուսումնարանի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև ուսումնարանի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

62. Հիմնադիրը կարող է ուսումնարանին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք կամ հետ վերցնել իր կողմից ուսումնարանին ամրացված գույքը: Ուսումնարանի ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

63. Ուսումնարանը սեփականության իրավունք ունի ամրացված գույքի օգտագործման արդյունքում ուսումնարանի ստացած եկամուտների, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ուսումնարանին նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ: Սեփականության իրավունքով ուսումնարանին պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ ուսումնարանի լուծարումից հետո մնացած գույքի:

64. Հիմնադրի կողմից ուսումնարանին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ ուսումնարանի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

65. Ուսումնարանն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Ուսումնարանի սեփականության պահպանման պարտավորությունը կրում է ուսումնարանը:

66. Ուսումնարանն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարվանից ավելի չի կարող սահմանվել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

67. Ուսումնարանի զբաղեցրած տարածքները (այդ թվում՝ դասասենյակ, լաբորատորիա, առարկայական կաբինետ, մարզադահլիճ, գրադարան-ընթերցասրահ, համակարգչային սենյակ, արհեստանոց, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլ տարածքներ), ըստ կրթական ծրագրի, պետք է համապատասխանեն հիմնադրի սահմանած նորմատիվների պահանջներին:

68. Ուսումնարանն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

69. Ուսումնարանի սեփականության վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատական կարգով:

70. Հիմնադրի կողմից գույքն ուսումնարանին ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

IX. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒթՅՈՒՆԸ

71. Ուսումնարանի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

72. Ուսումնարանն, ըստ հիմնադրի սահմանած չափի և հատկացումների, ֆինանսավորվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

73. Ուսումնարանի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից:

2) Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը:

3) Արցախի Հանրապետության համայնքների բյուջեները:

74. Ուսումնարանն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ՝ լիազորված մարմնի համաձայնությամբ:

75. Ուսումնարանը կարող է վճարովի հիմունքներով սովորող ուսանողական համակազմի մինչև 10 տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին մասնակիորեն փոխհատուցել ուսման վճարը՝

1) միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին:

2) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին:

3) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին:

4) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին:

5) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին:

6) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնարանի հայեցողությամբ:

7) ուսումնարանի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

76. Ուսումնարանը սահմանված կարգով ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին:

77. Ուսումնարանը հիմնադրի սահմանած կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

78. Ուսումնարանի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ հիմնադրի սահմանած կարգով:

X. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

79. Ուսումնարանը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Ուսումնարանը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: Ուսումնարանը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

80. Ուսումնարանի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

81. Ուսումնարանը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Ուսումնարանը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

82. Ուսումնարանը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

83. Ուսումնարանի լուծարման դեպքում ուսումնարանի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե, իսկ ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների) հետագա ուսուցման կարգը սահմանում է հիմնադիրը»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2018թ.

N 326-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով ու հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N 29-Ն որոշումը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 188 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի II բաժինն ուժը կորցրած ճանաչել:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 189 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի II բաժինն ուժը կորցրած ճանաչել:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 190 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի II բաժինն ուժը կորցրած ճանաչել:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 191 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի II բաժինն ուժը կորցրած ճանաչել:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 192 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ բաժինն ուժը կորցրած ճանաչել:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 193 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի II բաժինն ուժը կորցրած ճանաչել:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 385 որոշմամբ հաստատված N 2 հավելվածից հանել «Սոցիալական ապահովության վարչություն» բառերը:

8. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Ստեփանակերտի քաղաքապետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 526 որոշմամբ հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի I բաժնում.

ա. 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 11-րդ և 16-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Արտադրական ենթակառուցվածքների բաժին»,

«16. Վերահսկողության բաժին»:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2018թ.

N 337-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 521-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածի 2-րդ մասը, «Սնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N521-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «1086-րդ հոդվածի 2-րդ մասի և «Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ» բառերը փոխարինել «1091-րդ հոդվածի 2-րդ մասի և «Սնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետում, III բաժնի վերնագրում, 17-րդ կետում ««Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով» բառերը փոխարինել ««Սնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերով.

բ. 4-րդ, 15-րդ, 19-րդ, 29-րդ կետերում «սոցիալական քարտի առկայության դեպքում՝ դրա համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը կամ վավեր սոցիալական ապահովության քարտի համարը» բառերով.

գ. 12-րդ կետի «նախատեսված» բառից հետո, 13-րդ կետի «անվամբ» բառից հետո, 27-րդ կետի «անվամբ» բառից հետո «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

դ. 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերով,

ե. 15-16-րդ, 27-րդ, 29-30-րդ կետերից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը,

զ. 18-րդ կետում ««Անվճարունակության (սնանկության) մասին»» բառերը փոխարինել ««Մնանկության մասին»» բառերով,

է. 20-րդ կետում ««Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ» բառերը փոխարինել ««Մնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ» բառերով,

ը. 23-րդ կետի «գործընթացում» բառից հետո ««Անվճարունակության (սնանկության) մասին»» բառերը փոխարինել ««Մնանկության մասին»» բառերով, իսկ ««Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված պահանջների բավարարմանը), որոնց կատարումից հետո նոր միայն անցնի «Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ» բառերը՝ ««Մնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված պահանջների բավարարմանը), որոնց կատարումից հետո նոր միայն անցնի «Մնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ» բառերով,

թ. 26-րդ կետում ««Անվճարունակության (սնանկության) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ»» բառերը փոխարինել ««Մնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2018թ.

N 338-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 259-Ն ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
25-Ի N 260-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Աշխատանք փնտրող անձի հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգն ու ժամկետները, աշխատանք փնտրող անձի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 334 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 259-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

3) 5-րդ, 11-րդ, 13-14-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության գործակալություն գործազուրկի չներկայանալու հարգելի պատճառների ցանկը սահմանելու մասին» N 260-Ն որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ սահմանված հավելվածի վերնագրում, 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2018թ.

N 339-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի պահանջներով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անձնագրային համակարգի հետագա կատարելագործման մասին» N 53 որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անձնագրային համակարգի կանոնադրության 20-րդ կետից հետո լրացնել նոր 20.1-ին կետ.

«20.1. Եթե չհաշվառված կամ բնակության վայրը փոխելու կապակցությամբ հաշվառվող անձը չի կարող ներկայացնել տվյալ տարածքում բնակվելու իր իրավունքը հավաստող փաստաթուղթ, ապա անձի՝ դիմումում նշված հասցեում բնակվելու փաստը ստուգվում է ոստիկանության կողմից, դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Դիմումում նշված հասցեում անձի բնակվելու փաստը ստուգելուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ոստիկանության կողմից համապատասխան անձնագրային ծառայություն է ուղարկվում փաստացի բնակվելու փաստը հավաստող կամ հերքող տեղեկանք:

Սույն կետով նախատեսված անձանց հաշվառումն իրականացվում է փաստացի բնակվելու փաստը հավաստող տեղեկանքը տեղական ռեզիստր ստացվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի բնակվելու փաստը հերքող տեղեկանք ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղական ռեզիստրը գրավոր մերժում է դիմումատուին:

Այն դեպքերում, երբ նախապես հայտնի է բնակելի տարածության սեփականատիրոջ առարկությունն իր բնակելի տարածության հասցեում դիմումատուին հաշվառելու վերաբերյալ, կամ դիմումատուն բնակվում է (գտնվում է) բնակելի տարածություն չհանդիսացող տարածքում, ապա տեղական ռեզիստրում կատարվում է նշում փաստացի բնակվելու (գտնվելու) վայրի մասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2018թ.

N 340-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 72-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման անցկացման կարգն ու պայմանները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի ձևը սահմանելու մասին» N 72-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ սահմանված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից (այսուհետ՝ աշխատակազմ)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից» բառերով, իսկ 2-րդ ենթակետում «աշխատակազմ» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով,

բ. 4-րդ կետում և 5-րդ կետի 5-րդ ենթակետում «աշխատակազմից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունից» բառերով.

2) որոշմամբ սահմանված N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը՝ (այսուհետ՝ աշխատակազմ)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով,

բ. 4-րդ կետում «աշխատակազմ» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն» բառերով,

գ. 5-րդ կետում «աշխատակազմի» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերով, իսկ «աշխատակազմի ղեկավար-նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի (այսուհետ՝ նախարար)» բառերով,

դ. 7-րդ կետի 2-րդ ենթակետում «աշխատակազմի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերով, իսկ 4-րդ ենթակետում «աշխատակազմի ղեկավար-նախարարին» բառերը փոխարինել «նախարարին» բառով,

ե. 10-րդ, 11-րդ կետերում և 12-րդ կետի 4-րդ ենթակետում «աշխատակազմ» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

զ. 13-րդ կետի 1-ին ենթակետում և 16-րդ կետում «աշխատակազմի ղեկավար-նախարարի» բառերը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նախարար» բառով՝ համապատասխան հոլովաձևերով,

է. 18-րդ կետում «աշխատակազմի» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերով,

ը. 20-րդ, 23-րդ, 52-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ և 69-րդ կետերում «աշխատակազմի ղեկավար-նախարար» բառերը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նախարար» բառով՝ համապատասխան հոլովաձևերով,

թ. 70-րդ կետում «Աշխատակազմն» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունն» բառերով,

ժ. 72-րդ կետում «աշխատակազմի ղեկավար-նախարար» բառերը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նախարար» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

3) որոշմամբ սահմանված N 3 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) ղեկավար-նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով, իսկ «աշխատակազմի» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով,

բ. 4-րդ և 5-րդ կետերում «աշխատակազմ» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

գ. վկայականի ձևում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով, «ԼՂՀ կառավարության աշխատակազմի» բառերը փոխարինել «ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով, իսկ «ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար» բառերը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2018թ.

N 347-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 17-ի «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 227 որոշման 1-ին կետի «դ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության պահպանության վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 26-ի «Օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» N 519 որոշման տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի «Լիազոր պետական մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի N 904 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 823-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ, «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ» բառերը փոխարինել «Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ» բառերով.

2) որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 18-ի «Ջրային հարաբերությունների կարգավորման բնագավառում կառավարման լիազոր մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 571 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 479-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2018թ.

N 348-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 712 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 712 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) «Արցախանտառ» ՊՈԱԿ-ն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,

- տնկանյութի (տնկիների, սերմնաբույսերի) աճեցում և իրացում,

- մեղվաբուծություն,

- խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

- հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,

- անտառօգտագործման և անտառապահպանության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցում.».

2) որոշման 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությանը» բառերով,

բ. 7-րդ և 10-րդ կետերում, 11-րդ կետի «գ» ենթակետում, 18-րդ, 21-րդ և 23-րդ կետերում, 25-րդ կետի «ժ» ենթակետում, 28-րդ կետի «բ» և «ժբ» ենթակետերում, 36-րդ, 40-րդ և 45-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

գ. 9-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղ. Ստեփանակերտ, Խանին բաղ տեղամաս» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան փողոց, 117» բառերով,

դ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,

բ) տնկանյութի (տնկիների, սերմնաբույսերի) աճեցում և իրացում,

գ) մեղվաբուծություն,

դ) խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

ե) հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,

զ) անտառօգտագործման և անտառապահպանության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցում:»,

է. 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ վարչություն)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)» բառերով,

զ. 16-րդ և 21-րդ կետերում, 28-րդ կետի «բ» և «ժա» ենթակետերում, 30-րդ, 31-րդ և 40-րդ կետերում «վարչություն» բառը և դրա համապատասխան հոլովածները փոխարինել «նախարարություն» բառով և դրա համապատասխան հոլովածներով,

է. 17-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետը (այսուհետ՝ վարչության պետ)» և «վարչության» բառերը փոխարինել համապատասխանաբար «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարը (այսուհետ՝ նախարար)» և «նախարարության» բառերով,

ը. 18-րդ կետում «վարչության պետը» և «վարչության» բառերը փոխարինել համապատասխանաբար «նախարարը» և «նախարարության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2018թ.

N 349-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ
ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 76-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ը որոշում է**:

1. Սահմանել Արցախի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարներին՝ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործումն իրականացնել սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏԻԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:

2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.

2) արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վառարացման կանխումը.

4) արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:

3. Մինչև արոտավայրերի օգտագործումը շրջանների վարչակազմերի ղեկավարների կողմից կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտաշրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝

1) մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.

2) արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.

3) նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:

5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է շրջանների վարչակազմերի ղեկավարների կողմից յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

6. Արոտային շրջանի տևողությունը հանրապետության ցածրադիր, հարթավայրային և նախալեռնային գոտիներում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:

7. Մինևույն արոտատարածքում ամբողջական բոլորապատույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝

- 1) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.
- 2) տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.
- 3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.
- 4) ենթալայյան գոտում՝ 5-6 անգամ.
- 5) ալպյան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է զարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալպյան գոտիներում՝ 6-8 սանտիմետր.

2) տափաստանային գոտում՝ 10-12 սանտիմետր.

3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալայյան գոտիներում՝ 12-15 սանտիմետր բարձրություն:

9. Մեծ թեքություններում (15 աստիճան և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:

10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:

11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնագլխաքանակով և որոշվում՝ հետևյալ բանաձևով.

$$F = \frac{U \cdot S}{n \times S}$$

որում՝

U-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,

F-ն՝ 1 հեկտար արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,

n-ն՝ մեկ պայմանական անասնագլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կիլոգրամ,

S-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:

12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝

1) կով, արտադրող ցուլ՝ 1.

2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0,66.

3) մանր եղջերավոր կենդանի՝ 0,1:

13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝

1) կիսաանապատային գոտում՝ 6-7 հեկտար.

2) տափաստանային գոտում՝ 2-2,5 հեկտար.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1,5-1,7 հեկտար.

4) ենթալայյան գոտում՝ 1-1,2 հեկտար.

5) ալայյան գոտում՝ 2-2,5 հեկտար:

14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝

1) կիսամանապատային և չոր տափաստանային արոտավայրերում՝ 40-60 հեկտար.

2) տափաստանային արոտավայրում՝ 20-40 հեկտար.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հեկտար.

4) ենթալայյան և ալայյան արոտավայրերում՝ 10-20 հեկտար:

15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝

1) ալայյան գոտում՝ 8-10.

2) ենթալայյան գոտում՝ 10-12.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.

4) տափաստանային գոտում՝ 16-20.

5) կիսամանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 20-40:

16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:

17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերած ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:

18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մետր հեռավորության վրա:

19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

1) կթու կովերի համար՝ 1-1,5 կիլոմետրից ոչ ավելի.

2) բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1,5-2,5 կիլոմետրից ոչ ավելի:

20. Արոտավանդակների սահմանագատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:

21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող

արժեքավոր հացազգի (դաշտավուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:

22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում՝ բուսածածկը հնձելով հողի մակերեսից 4-6 սանտիմետր բարձրության վրա:

23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնաթափման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

24. Սույն կարգի խախտումը հանգեցնում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2018թ.

N 350-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 76-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն):

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու են հանդիսանում Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը:

3) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված Ծրագրի 23-րդ կետի, որի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2018 ԹՎԱԳԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատություն ստեղծելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

3. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

4. 2017 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցներով ձեռք է բերվել և հողօգտագործողներին տրամադրվել 13 685 կիլոգրամ արևածաղկի, 3 000 կիլոգրամ հլածուկի, 20 000 կիլոգրամ կտավատի, 20 000 կիլոգրամ սոյայի, 150 000 կիլոգրամ հնդկացորենի, 51 130 կիլոգրամ եգիպտացորենի, 9 336 կիլոգրամ սիսեռի, 14 000 կիլոգրամ ոլոռի և 3 470 կիլոգրամ առվույտի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 291 359 կիլոգրամ ֆոսֆորական և 413 959 կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 2 737 հեկտար արևածաղկի, 500 հեկտար հլածուկ, 444 հեկտար կտավատ, 363,6 հեկտար սոյա, 2 308 հեկտար հնդկացորեն, 2840,6 հեկտար եգիպտացորեն, 103,7 հեկտար սիսեռ, 70 հեկտար ոլոռ և 158 հեկտար առվույտ:

Բացի նշված միջոցառումներից, անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն մշակողներին: Աջակցության ընդհանուր ծավալը կազմել է 63 120 000 ՀՀ դրամ գումար (315,6 հեկտարի դիմաց):

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 2 205 061 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 22 050 610 ՀՀ դրամ լրավճար:

2016 թվականին «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման» միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրվել է 23 հեկտար ծխախոտի և 9 հեկտար բազմամյա տնկարկի, իսկ անձրևացման ոռոգման համակարգ՝ 11 հեկտար սոխի մշակության համար:

2017 թվականին նույն միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրելու նպատակով հողօգտագործողներին անհատույց տրամադրվել է 170 132 000 ՀՀ դրամ՝ 299,08 հեկտար բազմամյա տնկարկների և 13 746 490 ՀՀ դրամ՝ 43,69 հեկտար ծխախոտի մշակության համար:

Ծրագրի իրականացման արդյունքում 2016 թվականի համեմատ 2017 թվականին շուրջ 2 անգամ ավելացել են արևածաղկի, շուրջ 5 անգամ հնդկացորենի, 2,3 անգամ եգիպտացորենի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել կտավատի, սոյայի,

սիսեռի, ոլոռի մշակությունը: Ընդլայնվել են արտադրական նշանակության բանջարանոցների տարածքները, որի արդյունքում կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բադրիջան, պոմիդոր, պղպեղ և սոխ) մթերման ծավալները: Պետք է նշել, որ 2017 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 200 հողօգտագործող:

5. Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի իմաստով օգտագործվող հասկացություններն են՝

1) **արտադրական նշանակության այգի՝** նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածք զբաղեցրած մեկ պտղատեսակով, որը կահավորված է ռոտզման կաթիլային համակարգով.

2) **դաշտավարություն՝** երկրագործության ճյուղ, որը գլխավորապես զբաղվում է պարենային, ինչպես նաև թելատու և կերային դաշտային բույսերի մշակությամբ.

3) **բազմամյա տնկարկ՝** արտադրական նշանակության այգիները, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղա-հատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր).

4) **յուղատու մշակաբույսեր (այսուհետ՝ յուղատու մշակաբույսեր)՝** արևածաղիկ, սոյա, կտավատ.

5) **ընդեղեն մշակաբույսեր (այսուհետ՝ ընդեղեն մշակաբույսեր)՝** ոլոռ, սիսեռ, ռսպ, լոբի.

6) **կերային խոտաբույսեր (այսուհետ՝ կերային խոտաբույսեր)՝** առվույտ, ռայգրաս, կորնգան.

7) **բանջարեղեն (այսուհետ՝ բանջարեղեն)՝** պոմիդոր, պղպեղ, բադրիջան, սոխ, սիստոր, վարունգ, կաղամբ, գազար, բազուկ.

8) **ցանքաշրջանառություն՝** նույն հողատարածքում իրար հաջորդող առնվազն չորս տարվա ընթացքում չորս տարբեր տեսակի մշակաբույսերի (ցելի) ցանքաշրջանառություն (ցանքափոխություն):

6. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ, և առաջնահերթ խնդիրը դրանց ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, մասնավորապես, դա վերաբերում է յուղատու մշակաբույսերին, ընդեղեն մշակաբույսերին, բանջարեղենին, հնդկացորենին, եգիպտացորենին, կերային խոտաբույսերին և ծխախոտին: Հանրապետության բնակչությանը սննդամթերքով ապահովվածության, ինչպես նաև սպառողական շուկայի հազեցվածության հարցում հատուկ տեղ է տրվում նաև պտղաբուծությանը:

7. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին տեղական վերամշակող ընկերությունների կողմից մթերվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը, անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, արտահանման համար մատակարարվող թարմ և վերամշակված պտուղների ծավալների ավելացումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

8. Արցախի Հանրապետության կառավարության կողմից հոդօգտագործողներին տրամադրվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տնականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, նոր այգիների հիմնադրմանը, բազմամյա տնկարկների և գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

9. Բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը:

10. Գյուղատնտեսության մեջ կիրառվում են ջրման տարբեր եղանակներ: Ներկայումս առավել արդյունավետ և ընդունելի են կաթիլային ոռոգման համակարգերը: Կաթիլային ոռոգման ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առանձին փոքր մակերեսներով կատարվում է հողի տեղայնացված խոնավացում անմիջապես յուրաքանչյուր բույսի արմատաբնակ տարածքում:

11. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների, զարնանացան մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների և ծխախոտի տարածքների ավելացման խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԻՐՆԵՐԸ

12. Դաշտավարության մեջ չափազանց կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը և ցանքատարածքների կառուցվածքի բարելավումը:

Մեկ տեսակի կուլտուրայի տնական մշակությունը նույն դաշտում իջեցնում է դրանց բերքատվությունը: Դաշտավարության մեջ առանց մշակաբույսերի հաջորդափոխություն սահմանելու, հնարավոր չէ լուծել հողերի բերրիության ապահովման և կայուն բերքի ստացման խնդիրները: Ցանքաշրջանառությունը միայն մշակաբույսերի և ցեղերի հաջորդականություն չէ, այլև ագրոտեխնիկական համալիր միջոցառումներ՝ մասնավորապես հողի մշակում, պարարտացում, հողատարման կանխարգելում, որոնց նպատակն է գյուղատնտեսական բույսերից կայուն և բարձր բերք ստանալը: Ցանքաշրջանառությունը մշակաբույսերի և ցեղերի գիտականորեն հիմնավորված հաջորդափոխությունն է ժամանակի (տարիների) և տարածության (դաշտերի) մեջ, կամ միայն ժամանակի: Ժամանակն այն գործոնն է, երբ ցանքաշրջանառության մեջ զբաղեցված մշակաբույսերը և ցեղերը նույն դաշտում հաջորդում են մեկը մյուսին, իսկ տարածությունը՝ երբ յուրաքանչյուր դաշտում եղած մշակաբույսերը կամ ցեղերը տվյալ ժամանակաշրջանում զբաղեցնում են որոշակի դաշտեր:

13. Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակությունը բարելավում է հողի ֆիտոսանիտարական վիճակը, պահպանում՝ էռոզիայից, ավելացնում՝ օրգանական նյութերի քանակը և բարելավվում՝ ֆիզիկական հատկությունները: Այդ առումով յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, բանջարեղենի, կարտոֆիլի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի և ծխախոտի մշակությունը կարևորվում է

ցանքաշրջանառության լավագույն բաղադրիչ լինելու, պարենային որոշ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնակերերի կայուն բազայի ստեղծման տեսանկյունից, իսկ ոռոգման կաթիլային համակարգերի կիրառումն ապահովում է մշակվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը:

14. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝

1) արդյունավետ և նպատակային օգտագործել ջրային ռեսուրսները, խթանել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը.

2) բարձրացնել պտղաբուծության ճյուղի արդյունավետությունը, ապահովել երկրի բնակչության կարիքները հայրենական արտադրության թարմ և վերամշակված պտուղներով, խթանել արտաքին շուկաներում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների (նուռ, ընկույզ, թուզ, արևելյան խուրմա, ձիթապտուղ, խնձոր, տանձ, սերկնիլ, թուֆ, հոն և այլն) արտադրությունը, նվազեցնել ներմուծումը և ավելացնել արտահանման ծավալները.

3) ինտենսիվ պտղաբուծության զարգացման խթանման միջոցով իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն.

4) ապահովել վերամշակող ձեռնարկությունների համար անհրաժեշտ քանակությամբ հումք, այդ վերամշակող ձեռնարկությունների զարգացմամբ և քանակական աճով ապահովել դրանց կողմից օգտագործվող հումքի պահանջարկի բարձրացումը.

5) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, սպառման համար անհրաժեշտ ներկրման քանակի նվազեցումը.

6) ցանքաշրջանառությունների կիրառմամբ յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը.

7) տարեկան մշակվող հողերի տարածքի ավելացումը, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին կատարումը, ցանքաշրջանառության ապահովումը, բարձր ծյունակությամբ սերմացուների օգտագործումը, ցանքի նորմաների պահպանումը:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով, իսկ երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների և բանջարեղենի դեպքում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության տրամադրում.

2) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի)

ձեռքբերում ու անհատույց (բացառությամբ եգիպտացորենի, սիսեռի և լոբու սերմերի) տրամադրում.

3) բանջարեղենի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

4) կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

5) ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում:

16. Սույն Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը կտրամադրվի այն անձանց, որոնք չունեն գյուղատնտեսության ոլորտում ծագած հարաբերություններից բխող նախորդ տարիներից կուտակված չմարված պարտավորություններ (հողի հարկ, վարձավճար, մատակարարված ոռոգման ջրի դիմաց պարտք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ ժամկետանց պարտքեր), որը հավաստվում է համապատասխան փաստաթղթով:

17. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

18. Տեղական ինքնակառավարման մարմինները, հիմք ընդունելով նախարարության կողմից սահմանված ժամկետները, **յուղատու և ընդդեղեն մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորեն, կերային խոտաբույսեր մշակելու ցանկություն ունեցող հողօգտագործողների դեպքում** ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայությունը (տեղեկանքը տրամադրվում է համայնքը սպասարկող գյուղատնտեսի կողմից), ընդունում են յուղատու և ընդդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի, բանջարեղենի, ոռոգման կաթիլային համակարգով ծխախոտի և բանջարեղենի մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների հայտերը՝ համաձայն N 1 ձևի:

Հայտերի հետ միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին են ներկայացվում համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի համարը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականի կամ համապատասխան տեղեկանքի պատճենները:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների

վարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժին:

19. Ռոռզման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող Արցախի Հանրապետության քաղաքացիները (հողօգտագործողներ) ամբողջ տարվա ընթացքում հայտերը ներկայացնում են նախարարություն՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով ռոռզման կաթիլային համակարգերի տեղադրման հնարավորությունները և պայմանները, կցելով վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Մեկ ամբողջություն կազմող միավոր տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ մի քանի անձանց գույքային իրավունքների առկայության պայմաններում, ռոռզման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու համար տրամադրվող պետական աջակցությունից այդ անձինք կարող են օգտվել գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու դեպքում:

20. Շրջանների վարչակազմերն ընդհանրացնում և մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 30-ը, ռոռզման կաթիլային համակարգով բանջարեղենի մշակության դեպքում՝ մինչև ապրիլի 30-ը, բանջարեղենի մշակության համար անհատույց ֆինանսական միջոցներ կամ դրանց համարժեք ապրանքանյութեր ստանալու նպատակով՝ մինչև օգոստոսի 1-ը նախարարություն են ներկայացնում սույն Ծրագրի 18-րդ կետում նշված տեղեկությունները:

21. Ռոռզման կաթիլային համակարգով ծխախոտի, բանջարեղենի և բազմամյա տնկարկների մշակության դեպքում անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել եռակողմ պայմանագրի գործողության ժամկետից:

22. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամաններով սույն Ծրագրի 20-րդ կետում նշված տեղեկությունների ուսումնասիրման, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության համար տրամադրված ֆինանսական միջոցների կամ ապրանքանյութերի նպատակային օգտագործման և իրականացված աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

23. Նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար ռոռզման կաթիլային համակարգի տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով, իսկ երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների և բանջարեղենի մշակության դեպքում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության տրամադրում.

1) նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով կաթիլային համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց տրամադրվում է 750 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը ձևակերպվում է որպես անտոկոս փոխառություն.

2) հանձնաժողովն Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, տեղում ճշտում է հողատարածքների մակերեսները, ռոտզման կաթիլային համակարգեր տեղադրելու հնարավորությունները և պայմանները, սլյալ հողատարածքում ռոտզման ջրի առկայությունը և ռոտզման կաթիլային համակարգերի ներդրման նպատակահարմարությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ռոտզման կաթիլային համակարգերի տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով: Փաստաթղթերի մեկ փաթեթը կազմվում է մեկ կազմակերպության կողմից:

Համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և նախարարություն ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

3) սույն Ծրագրի շրջանակներում բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների համար ռոտզման կաթիլային համակարգեր տեղադրելու նպատակով նախարարության կողմից սահմանված ժամկետում ռոտզման կաթիլային համակարգեր տեղադրող լիցենզավորված ընկերությունները (այսուհետ՝ ընկերություններ) նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 3 ձևի:

4) հանձնաժողովը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և՝

ա. տալիս է եզրակացություն, միաժամանակ նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած կաթիլային ռոտզման համակարգով ծխախոտ մշակող հողօգտագործողների ֆինանսավորման մասին՝ նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը,

բ. հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը՝ նշելով ծխախոտի և բանջարեղենի մշակության մասով՝ անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը, բազմամյա տնկարկների մշակության մասով՝ անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարները և անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, պետական բյուջե վերադարձման ժամկետները կամ վաղաժամկետ մարման հնարավորությունը՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով:

5) ծխախոտի մշակության համար ռոտզման կաթիլային համակարգ տեղադրելու նպատակով անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարները ենթակա են վերադարձման պետական բյուջե մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը:

6) հիմնադրամը՝

ա. դրական եզրակացություն ստացած բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և ընտրված ընկերությունների հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված դրույթները,

բ. հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա ապահովում է գործընթացի իրականացումը՝ ծխախոտի և բանջարեղենի մշակությամբ զբաղվող

հողօգտագործողների հետ կնքելով անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունով և 4-րդ ենթակետով նախատեսված դրույթները.

7) նախարարությունը դրական եզրակացություն ստացած ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝ նախատեսելով կաթիլային ոռոգման համակարգի տեղադրման աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ.

8) հիմնադրամը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ.

9) ընկերությունների կողմից ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից.

10) նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 7-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով.

11) պետական աջակցության տրամադրման պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով նվազագույնը 1 հեկտար, իսկ բանջարեղենի մասով՝ նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ նաև տունկը կատարված լինելը.

12) ոռոգման կաթիլային համակարգերի ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց արժեքները ենթակա են վերադարձման պետական բյուջե, ընդ որում՝ անտոկոս փոխառության մասով՝ վաղաժամկետ.

13) բանջարեղենի մշակության համար կաթիլային ոռոգման համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության տրամադրումն իրականացվում է հիմնադրամի միջոցներով:

24. Յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) ձեռքբերում ու տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքում յուղատու և ընդդեմ մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորենի և կերային խոտաբույսեր մշակելու համար հողօգտագործողներին տրամադրվում է 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմ, պարարտանյութեր և ինոկուլյանտ (ախտահանիչ), անհատույց, իսկ եգիպտացորենի, սիսեռի և լոբու սերմերը՝

արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ (տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) սահմանված քանակները ներկայացված են N 1 աղյուսակում)։

2) Ծրագրից օգտվելու (սերմի, պարարտանյութի և ինոկուլյանտի (ախտահանիչի) տրամադրում) պարտադիր պայման է համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ հողատարածքը ցանքսին պատրաստ լինելու մասին։ Պարարտանյութերը տրամադրվում են անհրաժեշտության դեպքում՝ հիմնավորված հողերի ազդեցիկության հետազոտությունների արդյունքներով։

3) Ծրագրում ընդգրկված մշակաբույսերի և խոտաբույսերի մշակության համար անհրաժեշտ սերմերը (հանրապետության տարածքում նախապես փորձարկված), պարարտանյութերը և ինոկուլյանտը (ախտահանիչը) հիմնադրամի կողմից ձեռք կբերվեն և կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա։

4) Ծրագրով նախատեսված կորնզանի սերմը հողօգտագործողներին տրամադրվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրերով՝ «Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն (կորնզան)» միջոցառմամբ նախատեսված ֆինանսական միջոցներով։

5) պետական աջակցությունը կտրամադրվի այն հողօգտագործողներին, որոնք հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան և ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կիրառում են ցանքաշրջանառություն։

6) ազրոտեխնիկական ժամկետներում տրամադրված սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե։

7) շրջանների վարչակազմերը, մինչև ընթացիկ տարվա հունիսի 15-ը, տեղեկություններ են տրամադրում նախարարությանը սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) նպատակային օգտագործման վերաբերյալ։

25. Բանջարեղենի և կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում բանջարեղեն մշակելու համար 1 հեկտարի դիմաց հողօգտագործողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ 200 000 ՀՀ դրամ, իսկ կարտոֆիլ մշակելու համար՝ 150 000 ՀՀ դրամ՝ միանվագ գումարի կամ այդ գումարին համարժեք քանակությամբ ապրանքանյութերի տեսքով (մեկ հողակտորի մակերեսը ոչ պակաս, քան 0,5 հեկտար)։

2) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, տասնօրյա ժամկետում

ստուգում է ներկայացված փաստաթղթերը, ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ բանջարեղեն մշակելու համար դիմած հողօգտագործողների ցանկը՝ նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով:

3) աջակցությունն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

26. Ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակված ծխախոտից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով:

2) լրավճարը տրամադրվում է Արցախի Հանրապետության տարածքում գործող ընկերություններին մթերված բերքի դիմաց:

3) մթերող ընկերությունները յուրաքանչյուր տարվա ծխախոտի բերքի (հումքի) մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում նախարարություն՝ նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը:

4) նախարարությունը սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով մթերող ընկերությունների անվանումները և վճարման ենթակա գումարները:

5) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները:

6) մթերող ընկերությունները համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին են վճարում ծխախոտի բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարը:

27. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

28. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ջրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործում:

2) նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում:

3) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում:

4) մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

29. Ծրագրի իրականացումից յուրաքանչյուր տարի նախատեսվում է՝

1) ռոռզման կաթիլային համակարգեր տեղադրել ավելի քան 400 հեկտար բազմամյա տնկարկների և ծխախոտի մշակության համար.

2) հասնել ռոռզման ջրի 100 տոկոսով արդյունավետ օգտագործմանը, 30-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացմանը և ստացվող բերքի որակի բարձրացմանը.

3) ցանել ավելի քան 7 000 հեկտար յուղատու և ավելի քան 500 հեկտար ընդեղեն մշակաբույսեր.

4) վերամշակող ընկերություններում հողօգտագործողներից մթերել ստացված ծխախոտի ամբողջ հումքը.

5) ֆինանսական միջոցները կամ դրանց համարժեք ապրանքանյութերը տրամադրել շուրջ 500 հեկտար բանջարեղենի մշակության համար:

30. Յուղատու և ընդեղեն մշակաբույսերը, հնդկացորենը և բանջարեղենը հումք են հանդիսանում վերամշակող ընկերությունների համար: Յուղատու մշակաբույսերի վերամշակումից ստացված ձեթը, ընդեղեն մշակաբույսերից՝ հատիկը, հնդկացորենից՝ հնդկաձավարը և բանջարեղենից՝ պահածոները հանդիսանում են առաջին անհրաժեշտության պարենամթերք և ունեն մեծ դեր ու նշանակություն մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Առվույտից ստացվում է անասնակեր, որը կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

31. Սույն Ծրագրի շրջանակներում տրամադրված պետական աջակցության միջոցով ստացված բերքի մթերումը (իրացումը) պետական աջակցության ծրագրի մաս չի կազմում՝ բացառությամբ մշակված ծխախոտից ստացված բերքի մթերումից (իրացումից):

32. Նվազագույնը 10 հեկտար մակերեսով գործող այգի ունենալու և հետագայում ևս առնվազն 10 հեկտարով այգու տարածքը մեծացնելու հնարավորության, անհրաժեշտ ջրային ռեսուրսների, ենթակառուցվածքների և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում պետական կամ այլ միջոցներով կկառուցվեն խորքային հորեր (արտեզյան ջրհորներ):

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության _____ շրջանի
_____ համայնքի ղեկավարին
(վարչակազմի ղեկավարին)

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Պետական գրանցման վկայականի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսվող աջակցության տեսակը _____

Մշակվող կուլտուրայի տեսակը _____

Մշակվող հողատարածքի մակերեսը _____

Հայտին կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

(անուն, ազգանուն)

(ստորագրությունը)

« _____ » _____ 20__ թ.

Ձև N 2
Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշի
համարը _____

Պետական գրանցման վկայականի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսվում է կաթիլային ոռոգման համակարգ տեղադրել _____ հա
_____ համար

(մշակվող կուլտուրայի տարիքը, տեսակը)

Կաթիլային ոռոգման համակարգ տեղադրող ընկերությունը _____

Հայտին կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

_____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրությունը)

« _____ » _____ 20__ թ.

Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Ոռոգման կաթիլային համակարգերի ներդրման աշխատանքների մասնակցության

..... ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամություն է հայտնում մասնակցելու ԱՀ կառավարության 2018 թվականի _____-ի N _____-Ն որոշմամբ հաստատված «Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվելիք՝ ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման աշխատանքներին:

Միաժամանակ հայտարարում եմ, որ՝

- մեկ միավոր հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգի տեղադրումն կիրականացվի Ընկերության կողմից,

- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը և ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ առնվազն երեք տարվա ընթացքում երաշխիքային սպասարկումն իրականացնում է Ընկերության կողմից.

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր՝ Ընկերության գործունեության և կատարած աշխատանքների մասին (*ոչ պարտադիր դրույթ*):

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Կից ներկայացնում եմ լիցենզիայի պատճենը:

Ստորագրող՝

.....
(պաշտոնը)

.....
(անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

..... 20__թ.

Աղյուսակ N 1

Տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) սահմանված քանակները 1 հեկտարի համար

Հ/հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմի քանակը (կգ)	Տրամադրվող ինոկուլյանտի (ախտահանիչի) քանակը (մլ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
				ֆոսֆոր	կալիում
1	Եգիպտացորեն (հատիկ)	20			
2	Եգիպտացորեն (սիլոս)	30			
3	Հնդկացորեն	80			
4	Արևածաղիկ	5		50	100
5	Սոյա	55	130	50	100
6	Կտավատ	50		50	
7	Առվույտ	20			
8	Ռայգրաս	35			
9	Ոլոռ	200			
10	Սիսեռ	100			
11	Ոսպ	120			
12	Լոբի	100			

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները																	
Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատեսվում է մշակել (հա)	Ցանցի կամ տնկման նորմա (կգ, հատ/հա)	Համախառն բերք (տ)	Անտառի փոխառության և անհատուց դրամական միջոցներ (ՀՀ դրամ)	Ապրանքաբույսի պահանջը (կգ, հատ)	Ապրանքաբույսի արժեքը (ՀՀ դրամ)	Անհատուց դրամական միջոցների կամ ապրանքաբույսերի տրամադրում (ՀՀ դրամ)	Ն.Ն.Փ փորձաքննություն (ՀՀ դրամ)	Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ)	Լրավճար մեթոդած բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ինվալյուստի արժեքը (ՀՀ դրամ)	Պարարտանյութի արժեքը (ՀՀ դրամ)	որից՝		Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	
														ֆու-ֆոդ	կալիում		
1	Կաթիլ ային համակարգ	285			426104000				1452000	8696000							436252000
	Եզիպտացորեն (հատիկ)	1352	20			27035	45959500										45959500
	Եզիպտացորեն (սիլոս)	187	30			5610	9537000										9537000
2	Հնդկացորեն	1250	80			100000	54000000										54000000
3	Արևածաղիկ	3250	5			16250	77675000						73290000	24430000	48860000		150965000
4	Սոյա	200	55			11000	6930000					650000	4200000	1400000	2800000		11780000
5	Կտավատ	2740	50			137000	95900000						19180000	19180000			115080000

6	Աովույտ	400	20			8000	13600000									13600000
7	Ռայզրաս	34,4	35			1204	2408000									2408000
8	Ոլոռ	100	200			20000	7600000									7600000
9	Միսեռ	170	100			17000	9860000									9860000
10	Ոսպ	100	120			12000	13200000									13200000
11	Լոբի	10	100			1000	300000									300000
12	Ծխախտ			3525						35250000						35250000
13	Բանջարեղեն	500						100000000								100000000
14	Կարտոֆիլ	200						30000000								30000000
ԸՆԴԱՄԵՆԸ		10778		3525	426104000		336969500	130000000	1452000	8696000	35250000	650000	96670000	45010000	51660000	1035791500

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2018թ.

N 351-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագիրը հաստատելու մասին» N 501-Ն որոշումը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ